ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 3, 1950 *Общественные науки*

Ա. Պողոսյան

ՂՐԻՄԻ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԿՈՎԿԱՍՅԱՆ ՌԱԶՄԱՃԱԿԱՏԸ ԵՎ ՀԱՅԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Ղրիմի պատերազմի պատմությունը ամբողջությամբ վերցրած, բավականաչափ ուսումնասիրված, մշակված է, սակայն նույնն ասել չենք կարող այդ պատերազմի Կովկասյան ռազմաճակատի վերաբերյալ։ Թե նախասովետական, և թե սովետական պատմագրության մեջ հարկ եղած չափով չի արված Կովկասյան ռազմաճակատի պատերազմական գործողությունների պատմությունը, լրիվ կերպով չի վեր հանված այդ ռազմաճակատի նշանակությունը պատերազմի ընդհանուր ելքի համար և՝ որ կարևորն է՝ չի վերհանված Կովկասյան տեղական ժողովուրդների ակտիվ մասնակցությունը և նրանց կատարած դերը այդ պատերազմում։

Կովկասյան ռազմաճակատում ռազմական գործողությունները սկսվել են 1853 թվականի հոկտեմբեր ամսին, մինչև պատերազմ հայտարարելը Թուրքերի կողմից, որոնք նպատակ ունեին նախահարձակ լինելով ռազմական գործողությունների նախաձեռնությունն իրենց ձեռքը վերցնել, մանավանդ, որ կովկասյան սահմաններում Ռուսաստանն ամրություններ չուներ։

Ալեքսանդրոպոլում,— որն ամենից ուժեղ ամրությունն էր, գտնվում էր 60—65 կիլոմետր հեռավորության վրա Կարսից,— կենտրոնացած էին ռուսական գլխավոր ուժերը։ Ախալքալաքը, որը փակում էր Կարսից Արոահան տանող ճանապարհը, նույնպես պատշաճ կերպով ամրացված չէր։ Զախ թևում՝ պարսկա-Թուրքական սահմանում գտնվող Երևանը նույնպես իրենից հուսալի պատվար չէր ներկայացնում։ Արփաչայը, որ մոտավորապես 100 կիլոմետր երկարությամբ հոսում էր սահմանով հուսալի բնական ամրություն չէր, որովհետև մայիսից հետո նա ամենուրեք անցանելի էր։

Ռուսաստանը՝ չունենալով Թուրքիայի սահմանամերձ շրջաններում շատ Թե քիչ ապահով բնական ամրություններ, բերդեր ու ամրացված կայաններ, անհրաժեշտ քանակությամբ զինվորական միավորներ, ստիպված էր անհապաղ զգալի քանակությամբ մարդկային ուժ կենտրոնացնել սահմաններում, արգելակելու համար Թուրքական հրոսակախմբերի ասպատակությունները։

Թուրքերը նախօրոք իմանալով կովկասյան ժողովուրդների համակրանքը դեպի Ռուսաստանը, 1853 թվի սկզբներից հաճախակի ասպատակում էին սահմանամերձ հայկական գյուղերը և բարբարոսական ձևերով, հաշվեհարդար տեսնում բնակչության հետ։

1853 թվականին Վորոնցովի կարգադրությամբ Ալեքսանդրոպոլ ժամանած իշխան Միրովսկին, հետևյալ վկայությունն է տալիս.

«Սկսած Ղարաքիլիսայից բնակչությունը մեծ տագնապի մեջ էր։ Սահմանամերձ գյուղերի բնակիչները փրկություն չէին գտնում քրդերի և բաշիբո-

զուկների հարձակումներից։ Ճանապարհները ծածկված էին գուլքով և ընտանիքներով լի սայլերով։ Բոլոր կողմերից քշում էին անասունները։ Շատ հայկական գյուղեր արդեն կողոպտված էին։ Պատկերը սարսափելի էր»։[1]

Պարզ է, որ պատերազմի նախօրյակին Կովկասյան ժողովուրդների նկատմամբ թուրքերի կողմից կիրառվող բռնությունները էլ ավելի պետք է ուժեղացնեին ատելություն այդ ժողովուրդների մեջ, հանդեպ իրենց դարավոր հարստահարիչների՝ թուրքական բռնակալների։

Հիշյալ ժողովուրդներն ամենայն սիրով աջակցում էին ռուսական զորամասերին, նրա հաղթանակի մեջ տեսնելով իրենց ազատագրման միակ հույսը։

Դեռևս պատերազմի նախօրյակին Կովկասյան փոխարքա Վորոնցովը՝ չունենալով իր տրամադրության տակ անհրաժեշտ քանակությամբ ռազմական ուժեր, ձեռնամուխ է լինում տեղական բնակչությունից կամավորական ջոկատներ կազմակերպելու գործին։ Այս մասին նա 1853 թվականի հոկտեմբերի 9-ին ռազմական մինիստր Դոլգորուկովին գրում է՝

«Ես ենթադրում եմ ժամանակի հանգամանքներին համապատասխան մշտական միլիցիա հավաքել»։[2]

Տեղական ուժերի օգտագործման անհրաժեշտության մասին „Библиотека для чтения" ժուռնալում (1857) հետևյալն է գրված.

«... Զորքերը Կովկասյան միջոցներից ուժեղացնելու համար չէր նախատեսվում այլ կերպ, քան տեղական միլիցիայի կազմակերպմամբ։[3] «Երևանի նահանգապետ գեներալ-մայոր Նազարովի դրությունը դժվարանում էր, իր տրամադրության տակ չունենալով բավարար քանակությամբ զորք, կողոպտիչներին փրկարար վախ ներշնչելու համար, նա պետք է սահմանափակվեր հնարավորության չափ, տեղական միջոցներով։ Այսպիսով կորդոնային պոստերը նա ուժեղացրեց զինված բնակիչներով, գյուղերում բնակիչներից կարգեց հսկիչներ, առանձին գյուղերի միջև շարժվող բնակչային հսկիչ ջոկատներ։ Բացի այդ՝ յուրաքանչյուր գավառից հավաքեց սկզբում 300-ական մարդուց բաղկացած միլիցիա, ֆսկ հետագայում այդ թիվը մեծացրեց տեղական նոր հավաքով և Ղարաբաղից եկած 3 հարյուրակով»։[4]

1853 թվականի կեսերից հայկական կամավորական ջոկատներ են կազմակերպվում Երևանում, Վաղարշապատում, Սարդարաբադում, Ալեքսանդրապոլում, Ելիզավետպոլում, Ղազախում, Նախիջևանում, Շամախում, Շուշում, Շորագյալում և Վրաստանի մի շարք գավառներում, որոնք մեծ եռանդով գործել են ամբողջ կամպանիայի ընթացքում և նրանցից շատերն արժանացել են պարգևի։ Պատերազմի նախօրյակին դեպի Ռուսաստան և ռուս ժողովուրդ հայերի ցույց տված հավատարմության մասին է վկայում Վորոնցովի 1854 թվականի մարտին գեներալ Ռեագին գրած նամակը, որտեղ ասված է.

[1] Зисерман А. Л. Фельдмаршал князь А. И. Барятинский, ст. 303-304 М. 1898 г.

[2] Акты, т. X. стр. 361.

[3] Библиотека для чтения, 1857 г., стр. 114.

[4] Там же, стр. 118.

«Ես արդեն վերևում ասացի հայերի դեպի մեզ ունեցած անկասկածելի հավատարմության և մեզ հետ կապված լինելու մասին»[1]

Այսպիսով, չնայած Ռուսաստանի Կովկասյան սահմանները բավականաչափ ամրացված չէին և սահմանների պաշտպանության համար անհրաժեշտ ուժերը բացակայում էին, այնուամենայնիվ սպասվելիք պատերազմական գործողությունների համար Ռուսաստանն Անդրկովկասում ուներ որոշ բարենպաստ պայմաններ։ Տեղական ժողովուրդները, հատկապես հայերն ու վրացիները դեռևս պատերազմի նախօրեին իրենց պատրաստակամությունն էին ցուցաբերում օգնելու ռուսական զենքին ոչ թե ցարիզմի գաղութային նվաճումների համար, այլ այն պարզ պատճառով, որ Ռուսաստանի հաղթանակի մեջ էին տեսնում թուրքական ծանր լուծը թոթափելու միակ հնարավորությունը։

* * *

1853 թվականի սեպտեմբերի 19-ին Կովկասում որպես գործող բանակի հրամանատար նշանակվում է գեներալ-լեյտենանտ Վասիլի Օսիպովիչ Բեհբութովը։ Ստանձնելով գործող բանակի հրամանատարությունը, Բեհբութովն իր տրամադրության տակ եղած փոքրաթիվ ուժերը դասավորում է Ախալքալաքից Երևան ձգվող սահմանագծում, իսկ ինքը՝ նկատի ունենալով Ալեքսանդրոպոլից Երևան ընկած տարածության ստրատեգիական խոշոր նշանակությունը, որտեղ սպասվում էին խոշոր մարտեր, մեկնում է Ալեքսանդրոպոլ։ Ալեքսանդրոպոլում եղած ժամանակ Բեհբութովն ամենից առաջ ձեռնարկում է Ալեքսանդրոպոլ բերդի ամրացման գործը, որին ակտիվ մասնակցություն էին ցույց տալիս հայերը։

Բեհբութովը ձեռնամուխ է լինում տեղական միլիցիայի կազմակերպման գործին, միաժամանակ աշխատում է զինել Համամլուի, Ղարաքիլիսայի, Ղշլաղի և Բեկանտի բնակիչներին։

Պատերազմի նախապատրաստման այս պայմաններում, սահմանամերձ շրջանների հայ բնակչության դրությունն ավելի էր վատթարանում, թուրքերի հաճախակի հարձակումների հետևանքով։ Տեղական հայ բնակիչները, որոնք անհամբեր սպասում էին ռուսների օգնությանը, նախօրոք իրենց ուժերով կազմակերպում էին իրենց գյուղերի և քաղաքների պաշտպանությունը։ Այս տեսակետից ուշադրության արժանի է Վաղարշապատում 300 հոգուց կազմակերպված ջոկատը, որի կազմակերպման պատասխանատվությունը դրվել էր Գևորգ Մալիցյանի և Ստեփան Սամսոնյանի վրա։ Վերջիններս կազմակերպելով ջոկատը նշանակել են յուրաքանչյուր 20 հոգու համար մեկ ղեկավար (քսանապետ), որոնք են՝ Աբրահամ Նավասարդյանը, Անդրեաս Կարապետյանը, Ավետիք Գևորգյանը, Սուքիաս Բաղալյանը, Մատթեոս Հովհաննիսյանը, Հովհաննես Խրիմյանցը, Մկրտիչ Մանուկյանը, Հակոբ Ենդիբարյանը, Գաբրիել Բաբայանը, Մխիթար Հարությունյանը, Գրիգոր Եկմալյանը, Գևորգ Աղաջանյանը, Ղազար Գրիգորյանը, Խաչատուր Պլուզյանը և Հովհաննես Փիլոյանը։

[1] Акты, т. X, стр. 96.

[2] Հայկական ՍՍՌ Գիտ. կենտր. Արխիվ, ֆ. 57, գ. 157, թ. 88։

Նման ջոկատներ էին կազմակերպվել նաև այլ քաղաքներում ու գյուղերում։ Այդ ջոկատները պարտավորվում էին ծառայության մեջ մնալ մինչև պատերազմի վերջը։

Թուրքական 40 հազարանոց բանակը առաջին անգամ հանդիպում է ունեցել ռուսական յոթ հազարանոց ջոկատի հետ 1853 թ. նոյեմբերի 2-ին, Բայանդուր գյուղում։ Այդ առաջին մարտը մտել է ռազմական պատմության մեջ այն պարզ պատճառով, որ երկու հակառակորդ կողմերի ուժերի խիստ անհավասարության պայմաններում ի վերջո ռազմի դաշտը մնացել է ռազմականապես ավելի մարտունակ, բայց և սակավաթիվ ռուսական ջոկատի ձեռքին։ Ռազմագետ պատմաբան Պոտտոն Բայանդուրի մարտը բնորոշել է այսպես՝

«Նա եղել է նախերգանքը երկու նշանավոր ճակատամարտերի՝ Բաշկալըքլարի և Քյուրուկ-դարայի և կարելի է ասել, այդ մաքուր Սուվորովյան մարտերը եղել են նրա պարզ հետևանքները և մի տեսակ նրա շարունակությունը»։[1]

Բայանդուրի մարտում ռուսական քաջարի ջոկատի հետ մասնակցել են նաև Բորչալուի, Ղազախի և Ելիզավետպոլի հայ կամավորները, իրենց միլիցիայի ջոկատներով։

Այդ մարտում իրենց աչքի ընկնող ծառայության համար 1854 թվականի ապրիլի 18-ի հրամանագրով բարձրացվել են մի շարք հայ ռազմիկների զինվորական կոչումները։ Թումանովը և Խանդամիրյանը շտաբս-կապիտանից դարձել են կապիտան, Կարգանովը, Ավալովը, Օրբելյանը, Մանուկյանը, Անանովը պոդպորուչիկից դարձել են պորուչիկ, ֆելդֆեբելներ Թամանյանը, Մելիքյանը, Տեր-Շմավոնովը դարձել են պրոպորուչիկ։ «Որ քաջ է» մակագրությամբ արծաթե մեդալով պարգևատրվել է Շորագյալի միլիցիայի ուրյադնիկ Պետրոս Գևորգյանը»։[3]

Երկրորդ լուրջ հանդիպումը թուրքական բանակների հետ տեղի է ունեցել 1853 թվականի նոյեմբերի 14-ին՝ Ախալցխայում։ Այդ մարտը նույնպես վերջացել է թուրքերի պարտությամբ։ Դրան էլ ակտիվ կերպով մասնակցել են հայերը և վրացիները։ Այդ տեսակետից արժանի են հիշատակության՝ փոխտեղակալ Դանիլովը, որն առաջինն է իրեն նետել թշնամու մարտկոցը և այնտեղ էլ ընկել հերոսի մահով, 3-րդ բրեստյան գնդի գումարտակի հրամանատար փոխգնդապետ Օսիպովը, նույն գումարտակի կապիտան Դավիգովը և ուրիշները։ Մարտում աչքի ընկնող ծառայության համար պարգևատրվել են՝ փոխգնդապետ Օսիպովը, «Գեորգի IV աստիճանի» շքանշանով, փոխտեղակալ Կարգանովը՝ «Աննայի III աստիճանի» շքանշանով, միլիցիոներ Հակոբ Հարությունյանը «Պատվո նշան IV աստիճանի» շքանշանով։[4]

Ախալցխայի հաղթանակի լուրը մեծ խանդավառություն է առաջ բերում Ալեքսանդրոպոլի զորքերի մեջ, որոնք կազմ ու պատրաստ կանգնած էին Բաշ-Շորագյալ գյուղում։

Չնայած թուրքական զորքերի նոր հրամանատար Ահմեդ փաշան հրաման

---

[1] „Кавказ", 1897, № 55.
[2] Հայկական ՍՍՌ Պետ. կենտր. Արխիվ, ֆ. 57, գ. 155, թ. 136։
[3] Кавказ, 1854 г. № 53, 89.
[4] Кавказ, 1856 г., № 57.

էր ստացել 36 հազարանոց բանակով նահանջել դեպի Կարս, սակայն, գոռոզանալով իր գերազանց ուժերով, որոշում է մարտի բռնվել և իր զորքերին դիմում է հետևյալ խոսքերով՝

«Ահա անհավատների ուժերը, որոնցով ուզում են մեզ սարսափեցնել, ինչի համար մենք մարտ տանք, քանի որ նրանցից յուրաքանչյուրին ընկնում է մեզանից չորս մարդ, կկապոտենք նրանց և կտանենք Կարս»։[1]

Հակառակ թուրքական հրամանատարի գոռոզությանը, ռուսական հրամանատարությունը մանրամասն կերպով ուսումնասիրելով թշնամու ուժերի դասավորությունը, նոյեմբերի 19-ին սկսում է գրոհը, որը և վերջանում է ռուսների փայլուն հաղթանակով։ Թշնամին մարտի դաշտում թողնում է 1000-ից ավելի սպանված, 24 թնդանոթ և բազմաթիվ այլ ռազմավար։

Այս ճակատամարտից հետո Բեհբութովը չի հետապնդում նահանջող թշնամուն, այլ վերադառնում է Ալեքսանդրոպոլ ամրացնելու։

Հայ կանայք և աղջիկները հոգատարությամբ են շրջապատում հաղթանակով վերադարձած մարտիկներին, ինչպես նաև վիրավորներին ու հիվանդներին։ Նրանց տեղավորում են հիվանդանոցներում, աներում, ապահովում են սննդով, լվանում են վերքերը, հագուստները, հրաժարվելով ամեն տեսակի վարձատրությունից։[2]

Բաշկադրքլարի ճակատամարտից ուղիղ 24 ժամ հետո, ինչպես ասում է ակադեմիկոս Տարլեն, Նախիմովը Սինոպի ծովախորշում խորտակում է թուրքական նավատորմը։ Ռուսական այդ հաջողությունների մասին անգլիացիները և ֆրանսիացիներն իմացել են միաժամանակ և Թուրքիային «օգնելու» հարցը համարել են հրատապ մի խնդիր։ Բաշքադրկլարի, Ախալցխայի և Սինոպի մարտերից հետո նրանք որոշեցին վճռաբար միջամտել Թուրքիայի գործերին և զենքով օգնել նրան։

Բաշքադրկլարի ճակատամարտից հետո մինչև 1854 թվի գարունը տեղի են ունեցել միայն տեղական նշանակություն ունեցող մարտեր, ընդդեմ թուրքական թալանչիական հարձակումների։ Այդպիսի հարձակումների ժամանակ նորից տեղական բնակիչները ցույց են տվել իրենց ակտիվ մասնակցությունը։ Հիշատակության արժանի է 1853 թվականի նոյեմբերին Սարդարաբադ և Էջմիածին թուրքերի կատարած հարձակման ժամանակ տեղական բնակիչների հերոսաբար պաշտպանությունը։ Այդ կռիվներին մասնակից 3 վաղարշապատցիներ, 1854 թ. փետրվարի 3-ին պարգևատրվել են խաչով՝ Գրիգոր Մանուկյանը, Գրիգոր Ավետիսյանը, Անդրեաս Կարապետյանը։[3]

Հաճախակի կրկնվող թուրքական հարձակումների դեմ կռվելու համար մոբիլիզացվել են տեղական ուժեր։ Հայտնի է 1853 թվականի նոյեմբերի 14-ին Վաղարշապատ ժամանած 500 հոգուց բաղկացած շուշեցիների և ղազախեցիների ջոկատը, որի ծախսերը հոգալու պարտավորությունը իրենց վրա էին վերցրել տեղական բնակիչները։[4]

1853 թվականին տեղի ունեցած ռազմական գործողությունների ժամանակ հայերի կատարած ծառայությունների մասին բազմաթիվ տեղեկություն-

---

1 „Русский инвалид", 1854 г. № 90.
2 Հայկական ՍՍՌ Պետ. կենտր. Արխիվ, ֆ. 57, գ. 155, թ. 130—131։
3 Նույն տեղում, ֆ. 57, գ. 155, թ. 80։
4 Նույն տեղում, թ. 84—85։

Ներ կան գործող բանակի գլխավոր հրամանատար Բեհբութովի զեկուցագրերում։

1853 թվականի դեկտեմբերի 23—31 կատարված ռազմական գործողությունների վերաբերյալ զեկուցագրում Բեհբութովը խոսում է Նոր-Բայազետի միլիցիայի մասին՝ Արծրունու գլխավորությամբ, որը հերոսաբար հետ էր մղել հայկական Ալիքիլիսա գյուղի վրա կատարված թուրքական հարձակումը։[1]

1853 թվականի ռազմական գործողությունների ժամանակ տեղական հայ բնակիչները ռուսական գործող զորամասերին օգնել են նաև նյութական միջոցներով։ Այդ մասին „Кавказ" թերթը գրում է հետևյալը՝

«Երևանի, Նոր-Բայազետի և Նոր-Բայազետի գավառի բնակիչները... Երևանյան ջոկատի զորքերին՝ ձմեռելու ժամանակամիջոցում նրանց դրությունը բարելավելու համար, իրենց միջոցներից նվիրել են առաջինը 400 ռուբլի, երկրորդը՝ 500 ռուբլի, իսկ երրորդը՝ 1000 ռուբլի։

Բացի այդ, Երևանի բնակիչները կամովին իրենց վրա են վերցրել առանց փողի զորքի համար Երևան տանել 150 սաժեն փայտ»։[2]

Այսպիսով՝ Կովկասյան ռազմաճակատի 1853 թ. ռազմական գործողությունների հաջողության համար քիչ նշանակություն չի ունեցել նաև տեղական հայ բնակչության օգնությունը, որը ռազմաճակատին տվել է մարդկային ուժ, պարենամթերք և կատարել է ռազմական նշանակություն ունեցող այլ ծառայություններ, ինչպես, օրինակ՝ հետախուզություն, ուղեկցի դեր և այլն։

1854 թվականի գարնանը ռազմական գործողությունները սկսում են Գուրիայից և Մինգրելիայից, դարձյալ թուրքերի հարձակումով։ 1854 թվականի մայիսի 29-ին Նիգոտյան բարձրություններում ռուսական ջոկատին հաջողվում է մի նոր պարտության մատնել հակառակորդին, որն ունեցել է 12 հազար մարդուց բաղկացած բանակ, Ռահիմ փաշայի հրամանատարությամբ։

Նիգոտյան բարձունքներում տարած հաղթանակին հաջորդում է հունիսի 3-ի Զոլոկ գետի ափին, Սելիմ փաշայի հրամանատարությամբ գործող թուրքական 34 հազարանոց բանակի դեմ տարած հաղթանակը։ Ինչպես առաջին, այնպես էլ երկրորդ մարտում ակտիվ կերպով հանդես են եկել տեղական միլիցիայի ջոկատները։

1854 թվականի մարտական գործողությունների հաջողության համար պակաս նշանակություն չեն ունեցել Երևանյան ջոկատի կատարած ռազմական գործողությունները։

1854 թվականի հուլիսի 17-ին երևանյան ջոկատին հաջողվում է Զինդիլյան բարձրություններում ջարդել թուրքական 20 հազարանոց բանակին և առանց մեծ դիմադրության մտնել հին Հայաստանի երբեմնի անառիկ քաղաք Բայազետը։

Այս հաղթանակի առթիվ ռուսական զորքերին ողջունելու են գալիս Արծապ գյուղի և Բայազետի հայ բնակիչները, որոնք հանդիսավոր կերպով ընդունում են Վրանգելին և նրան հանձնում քաղաքի բանալիները։ Ռուսական զորքերը՝ մտնելով Բայազետ, անմիջապես Վրանգելի հրամանով ստեղծում

[1] ЦГВИА. ф. ВАУ. д. 5622, лл. 28—29.
[2] „Кавказ", 1853 г., № 87.

են Դիվան՝ բաղկացած 4 հոգուց (2 հայ, 2 մահմեդական)։ Այս հաղթանակը ռուսների համար ունենում է այն կարևոր նշանակությունը, որ բարձրանում է ռուսական փոքրաթիվ, բայց արի ջոկատի բարոյական ու մարտական վիճակը և գրավում է տեղական բնակիչների սերն ու համակրանքը։ Այս կռիվներում աչքի ընկնող Վաղարշապատցի Գրիգոր Մանուկի Մանուկյանը ստանում է ոսկե մեդալ «Որ քաջ է» մակագրությամբ։[1]

Շուտով Բայազետ է գալիս հայկական պատգամավորություն Սուրբ Օհաննես վանքից- և հայտնում է ռուսներին, թե մինչև Թորփաղ-ղալա թուրքական զորքերը ետ են քաշվել։ Հայ պատգամավորությունը խնդրում է Վրանգելին անպայման գրավել այդ վայրերը և ազատել հայ բնակչությանը հետագա անխուսափելի կոտորածից։ Այդ պատճառով Վրանգելը մեկ գումարտակ զորք ուղարկում է սուրբ Օհաննես վանքը, որտեղ հայերը ռուսներին դիմավորում են խանդավառությամբ, խոստանալով իրենց միջոցներով հոգալ զորքի բոլոր կարիքները։ Նույնանման պատգամավորություն է եկել նաև Ալաշկերտից և խնդրել է գրավել այն, խոստանալով մատակարարել անհրաժեշտ քանակությամբ կենդանի ուժ ու պարենամթերք։

Ռուսները հնարավորություն չունենալով նրանց խնդիրը կատարել, խորհուրդ են տալիս հայերին, ռուսական զորքերի հետ նահանջել Անդրկովկաս։ Իրոք, օգոստոսի 7-ին, ալաշկերտցիներից մոտ 100 տնտեսություն զորքի հետ շարժվում է դեպի ռուսական սահմանը և բնակություն հաստատում Երևանի նահանգում։

Ալեքսանդրոպոլի զորքերը Բեհբութովի գլխավորությամբ պատրաստվում էին նոր ճակատամարտի Անատոլական բանակի դեմ։ Քաղաքի բնակիչներից կազմակերպվում են միլիցիայի նորանոր ջոկատներ։ Այդ է վկայում Ալեքսանդրոպոլի գավառապետի 1854 թվականի հուլիսի 21-ի զեկուցագիրը Բեհբութովին.

«Նորին պայծառափայլության Կովկասյան թուրքական սահմանում գործող կորպուսի հրամանատար պարոն գեներալ-լեյտենանտ և կավալերիստ-իշխան Վասիլի Օսիպովիչ Բեհբութովին։

Ալեքսանդրոպոլի գավառապետից.

Զեկույց

«Ալեքսանդրոպոլի քաղաքապետ կապիտան Շանշևը իր հուլիսի 19-ի № 2071 գրությամբ խնդրում է միջնորդություն Ձերդ պայծառափայլության առաջ, անկախ կազմավորվող ալեքսանդրոպոլյան 300 հոգուց բաղկացած միլիցիայից կազմակերպել նաև մեկ հեծյալ հարյուրակ։ Խորին հարգանքով ներկայացնելով այդ՝ Ձերդ պայծառափայլության քարեհայեցողությանը, պատիվ ունեմ զեկուցելու, որ հեծյալ հարյուրակը մեծ օգուտ կբերի։ Նա կմիացվի Շորագյալի միլիցիայի երրորդ հարյուրակին, պաշտպանելու համար մեր սահմանները քաղաքից մինչև Շիստապով և այդպիսով նրա պաշտպանության տակ՝ Շորագյալի տեղամասի լեռնային՝ դեպի հյուսիս գտնվող բնակիչները, ինչպես և քաղաքացիները հնարավորություն կունենան հնձել խոտ— Չարարեչյան լեռներում և հավաքել հացը դաշտից։ Եթե Ձերդ պայծառափայլությունը միլիցիան պահելու համար ծախսերը կրճատելու պատճառով չի բա-

[1] Հայկական ՍՍՌ Պետ. կենտր. Արխիվ, ֆ. 57, գ. 159, թերթ 73։

[2] Բայազետից 60 կմ. հեռավորության վրա, Եփրատի ափին։

րեհաճի հնարավոր համարել պահելու չորս հարյուրակ Ալեքսանդրոպոլ քաղաքից, այդ դեպքում կարելի է սահմանափակվել 200-յակ հետևակային միլիցիայով»[1]

Թուրքերն իմանալով ռուսների մտադրությունը, փոքր հարձակումներ էին գործում սահմանամերձ շրջանների վրա, նպատակ ունենալով խանգարելու ռուսական զորքերի նախապատրաստական աշխատանքները, սակայն այդ հարձակումները ետ են շպրտվում տեղական հայ բնակիչներից կազմված կամավոր միլիցիայի ուժերի միջոցով։

Բեհբութովը 1854 թվի հուլիսի 5-ին գրած իր մի զեկուցագրում այդպիսի հարձակումների մասին գրում է.

«Հունիսի 28—29-ի գիշերը հետախույզները հայտնել են Շորագյալի միլիցիայի հրամանատար պատպորուչիկ իշխան Թարխանովին, որ թուրքական Պիրվալի գյուղն է եկել հակառակորդի հեծելազորը, բաղկացած 2000 մարդուց Իզմայիլ փաշայի հրամանատարությամբ և պատրաստվում էր հարձակվելու մեր սահմանների վրա։ Այդ լուրը ստանալով պատպորուչիկ իշխան Թարխանովը հավաքել է իր միլիցիան, նրան միացնելով 300 զինված տեղական բնակիչ և տեղավորվելով նրանց հետ Բայանդուրում, ուղարկել է ուժեղ հետախուզություն իր օգնական պատպորուչիկ Կարագյոզովի գլխավորությամբ։ Հետախույզները սկսելով հրաձգությունը, կանգնեցրել են թշնամու առաջխաղացումը և թույլ չեն տվել նրանց անցնելու մեր ափը, մինչև իշխան Թարխանովը, որը գտնվում էր Բայանդուրում՝ հասնում է իրենց մոտ։ Այդ ժամանակ միլիցիան, կոզակները և բնակիչները գրոհելով թշնամու վրա, ետ են շպրտել և ստիպել նահանջել, որը կորցրել է մի քանի սպանվածներ և վիրավորներ, որոնցից մեկ սպանված և մեկ վիրավոր թողնվել է տեղում։ Մեր կողմից վիրավորվել է մեկ միլիցիոներ և սպանվել երկու ձի»։[3]

Մի այլ զեկուցագրում, որ վերաբերում է նույն թվականի հունիսի 22—24-ին, Բեհբութովը գրում է.

«Հունիսի 23—24-ին թշնամու հեծելազորը թվով մինչև 600 մարդ, անցնելով Կարս Չայը, Պիրվալի գյուղի մոտ նպատակադրվել է հարձակվելու մեր սահմանամերձ Բայանդուր, Թավշան Ղշլաղ, Ղաղաբաբադ, Սաֆանվերդի և այլ մոտիկ գյուղերի վրա։ Իմանալով այդ մասին, Շորագյալի միլիցիայի հրամանատար պատպարուչիկ իշխան Թարխանովը, հավաքում է իր հեծյալներին, միացնում նրանց զինված հեծյալ բնակիչների մի մասին և զբաղեցնում դիրքերը՝ Սաֆանվերդի գյուղի մոտ, ուղարկելով Արփաչայի վրա ուժեղ հետախուզություն, որը լուսաբացին Քալալի գյուղի մոտ նկատում է թշնամու մի ջոկատ, բաղկացած 150 մարդուց, որը գիշերն անցնելով Արփաչայը, կարողացել էր խլել Քալալի գյուղի մոտ արածող բնակիչների անասունները և քշել սահմանից այն կողմը։ Այդ հետախուզության հրամանատար փոխ-տեղակալ Կարագյոզովը թշնամու հետ հրաձգության է բռնվել և կասեցրել նրա շարժումը այնքան ժամանակ, մինչև եկել է իշխան Թարխանովը իր ամբողջ միլիցիայով և ետ շպրտել թշնամուն»։[4]

---

[1] ЦГВИА. Груз. ССР. ф. 559, д. 5, л. 35.

[2] Հունգարացի կիմետին, որ փախել էր Թուրքիա, 1848 թ. ռևոլուցիայի ժամանակ և ծառայության անցել թուրքական բանակում։

[3] ЦГВИА, ф. ВУА, д. 5622, ч. III, л. л. 61—63.

[4] Гос. Архив Арм. ССР, дело выписок, № 356, ч. II, л. 97.

Այնուհետև Իեհրութովը հունիսի 26-ի իր զեկուցագրում հայտնում է Թշնամու Կրզլ-Զաիչախ գյուղի շրջակայքում հայտնվելու մասին, որի դեմ նույնպես դուրս է եկել Շորագյալի միլիցիան և ետ շպրտել նրան։

1854 թ. հուլիսի 11-ին գրված զեկուցագրում հայտնվում է այն մասին, որ հուլիսի 4-ին թշնամու 2000-անոց ջոկատը փորձել է հարձակվել Բայանդուրի վրա, բայց Շորագյալի շրջակա գյուղերի բնակիչները զինվել են և միացել կազակական № 4 գնդի մեկ հարյուրակին, շտաբս կապիտան Մադաթովի գլխավորությամբ և հաջողությամբ ետ են շպրտել թշնամու բոլոր հարձակումները, միաժամանակ փախուստի մատնելով նրան, որը մարտի դաշտում թողել է 20 սպանված, բավականին թվով իրեր, զենքեր և այլն։[1]

Շորագյալի միլիցիայի մասին Բեհբութովը գրում է.

«Հուլիսի 4-ի լուսաբացին թշնամու հեծելազորը թվով մինչև 2000 մարդ հանկարծակի երևաց Բաշ-Շորագյալի բարձունքներում, դուրս մղեց մեր պահակներին և շրջապատեց Բայանդուր գյուղը։ Այստեղ հավաքված Շորագյալի միլիցիան գրավելով գյուղի շրջակայքը, թույլ չտվեց թշնամուն մտնել գյուղը և 10 ժամվա ընթացքում կանգնեցրեց թուրքերի թվով ավելի շատ ուժերին։ Թշնամու բոլոր ջանքերը և նրա բազմաթիվ գրոհները ետ են շպրտված նրա համար մեծ կորուստներով։ Նրանց հաջողվեց սպանել միայն 12 անզեն բնակիչների, որոնք չէին կարողացել թողնել գյուղը, և գերի վերցնել 4 կին։ Ցերեկվա ժամը 3-ին գոնյան կազակային № 4 գնդի մի հարյուրակ՝ յասաուլ Ալեքսեյեվի հրամանատարությամբ և Շորագյալի տեղամասի զանազան գյուղերի զինված բնակիչները, որոնք շտապ հավաքված էին տեղամասի պետ շտաբս-կապիտան Մադաթովի կողմից, Բայանդուր հասնելուն պես թշնամուն ենթարկեցին փախուստի և հետապնդման Շորագյալի բարձրությունների այն կողմը։ Չնայած իր թվական գերազանցությանը, թշնամին այնպես արագ էր փախչում, որ տեղում թողեց 20 դիակ, բացի այդ նրանցից խլված է շատ ձի և զենք։ Մեր կողմից սպանված են 8 միլիցիոներ և մեկ կոզակ, վիրավորված են 4 միլիցիոներ և կանտուզիա են ստացել 3-ը։ Ինձ համար դուրեկան է շարունակ թշնամու հետ հանդիպումներում աչքի ընկնող Շորագյալի միլիցիայի այդ նոր քաջության մասին հայտարարել ինձ վստահած կորպուսի զորքերին և միաժամանակ մի անգամ էլ շնորհակալություն հայտնել այդ միլիցիան ձևավորող Ալեքսանդրոպոլի գավառապետ, պալատական խորհրդատու Լանկովին, Շորագյալի միլիցիայի հրամանատար պատպարուչիկ իշխան Թարխանովին, նրա օգնականներ 10-րդ կարգի Հարությունովին, պրապարուչիկ Կարագյոզովին և 14-րդ կարգի Կալոևին, նույնպես և ժամանակին միլիցիային օգնության հասած յասաուլ Ալեքսեևին և շտաբս-կապիտան Մադաթովին, ինչպես և բոլոր ուրյադնիկներին, կոզակներին, վեքիլներին և հուլիսի 4-ին մասնակցած բոլոր հեծելավորներին։ Ինձ համար դուրեկան կլինի և պարտք կհամարեմ ներկայացնել առանձին աչքի ընկնողներին և համոզված եմ, որ Շորագյալի միլիցիայի քաջագործ ծառայությունը կարժանանա արժանի ուշադրության»։[2]

Բերած փաստերը վկայում են, որ հայ ժողովուրդը ոչ մի ջանք չի խնա-

[1] ЦГВИА. ф. ВУА. д. 522. л. л. 63—69.
[2] ЦГВИА Груз. ССР ф. 559. д 5. л.л. 23—24.

յել՝ օգնելու ռուսական բանակին, նպաստավոր պայմաններ ստեղծել նրա հաղթանակի համար ռազմաճակատի բոլոր մասերում։

Հայկական ուժերը մարտնչում էին տեղական նշանակություն ունեցող մարտերում և դրանով Բեհրութովին հնարավորություն էին տալիս իր ուժերը կուտակելու Ալեքսանդրոպոլում, նախապատրաստվելու նոր վճռական մարտերի։

Թուրքական բանակը, բաղկացած 60 հազար մարդուց, Ջարիֆ Մուստաֆա փաշայի գլխավորությամբ գտնվում էր Կարսի շրջակայքում։

Բեհրութովը ոչ միայն գիտեր այդ մասին, այլ նաև գիտեր որ Կարսն ամրացվել էր անգլիական և ֆրանսիական ուժերով։ Հաշվի առնելով վերոհիշյալ հանգամանքները, նա խուսափում է հարձակվել Կարսի վրա և որոշում է թուրքերին քաշել բաց դաշտ, նրանց ուժերը ջախջախել, որով և կհեշտանար Կարսի գրավումը։

Հուլիսի 23-ի երեկոյան հետախույզները հայտնում են, որ թուրքերն իրենց ծանր իրերն ուղարկում են Կարս, իսկ իրենք պատրաստվում են շարժվելու, բայց թե ո՞ւր, հայտնի չէ։ Հենց այդ հանգամանքը բավական էր, որպեսզի ռուսական բանակը պատրաստվեր շարժվելու։

Բեհրութովը երկու նպատակ ուներ, կամ ստիպել թշնամուն բաց դաշտում ճակատամարտ տալու (այդ այն դեպքում, եթե նա շարժվելու լիներ դեպի թշնամին), կամ խփել նրան թևից և կտրել թիկունքը, եթե նա նահանջեր։

Հունիսի 24-ի լուսաբացին Բեհրութովը իր գլխավոր ուժերը ուղղում է դեպի թշնամու դիրքերը։

Հարձակումը սկսելուց հետո, հուլիսի 24-ին առավոտյան ժամը 9-ին արդեն հակառակորդին վճռական հարվածը հասցվում է, թուրքական հսկայական բանակը մատնվում է խուճապահար փախուստի։ Փախչող թուրքական բանակին հետապնդում են հեծյալ մուսուլմանական գունդը, կազակները, Լորիս Մելիքովի կամավորները և վրացական դրուժինան։

«Դրագոնները, կազակները, մուսուլմանական հեծյալները, Լորիս Մելիքովի կամավորները և վրացական դրուժինան ոտնատակ են տվել, կոտորել այդ ամբոխին, միայն ժամը 1-ին դադարեցվել է հետապնդումը, մարդկանց և ձիերի հոգնածության պատճառով»։[1]

Մարտի արդյունքը եղել է վճռական, մնացել է 15 հրանոթ, 16 վառոդի արկղներով, 2 դրոշ, 20 նշան, 2018 գերի, որոնցից շտաբս-օֆիցերներ՝ 2, օբերօֆիցերներ՝ 84, ցածր աստիճանի՝ 1932 մարդ։ Մարտից հետո հաշվվել է 2232 սպանված, թուրքերը կարողացել են մարտի ժամանակ տանել 1000 դիակ։ Հետագա տվյալներով թաղվել է 2825 թուրքական դիակ. հետախույզների տվյալներով թշնամու ընդհանուր կորուստը հասել է մինչև 10 հազար մարդու, իսկ 12 հազար բաշիբոզուկներ դիմելով փախուստի, ցրվել են իրենց բնակավայրերը։[2] Ռուսական կողմից կորուստները եղել են շտաբս-օֆիցերներ՝ 4, օբերօֆիցերներ՝ 17, ցածր չին ունեցողներ և միլիցիայից 578 մարդ, վիրավոր շտաբս-օֆիցերներ՝ 9, օբերօֆիցերներ՝ 70, գեներալ 1, ցածր չինի՝ 1879, կանտուզիա ստացել են օբերօֆիցերներ՝ 29, ցածր չինի՝ 457, ընդամենը ռուսական կորուստը եղել է 3054 մարդ։[3]

[1] Гейрот. Описание восточной войны 1853—1856 г. г. стр. 239.
[2] Кавказ. 1854 г., № 79.
[3] Հայկական ՍՍՌ Պետ. կենտր. Արխիվ, ֆ. 37, դ. 133, թ. 99։

ժամանակակիցներից մեկը նկարագրելով այդ մարտը, գրում է.

«Այնտեղ պետք է տեսնեիք քաջաբազուկ ռուս զորքերի զորությունը։ Այնտեղ պետք է տեսնեիք մեր քաջամարտիկ հեծելազորի և հետևակի կորովությունը, նիզակների և հրացանների շողշողումը, շաչյունն ու շառաչյունը, ընկնողների գոչյումները, վիրավորների կերկերուն հառաչանքները և փախչողների ահռելի ձայները, որոնք լցնում էին Քյուրուկ-Դարայի ձորը»։[1]

Քյուրուկ-Դարայի մարտում աչքի են ընկել շտաբս կապիտաններ Սահակյանը, Արարատսկին, «քաջ մայոր Շալիկով հայկազն» Կոստանդին Արղությանը, կամավորներից՝ Գաբրիել Գեղամյանը և ուրիշներ։

Այդ մարտում հատկապես վիրավորների պաշտպանության գործում իրենց մատուցած աչքի ընկնող ծառայության համար, պարգևատրվել են ալեքսանդրոպոլցի Ադաբաբ Սիմոնյանը՝ արծաթե մեդալով, Հովհաննես Սիմոնյանը՝ արծաթե մեդալով, Տեր-Մարտիրոսյանը՝ ոսկե մեդալով, Բեկանդ գյուղից Ավագ Վարդանյանը, Թափանլի գյուղացի Հովհաննես Ղազարյանը, համամլվեցի Աթո Օսիպյանը, թալաջախցի Միխո Հովհաննիսյանը՝ արծաթե մեդալներով։[2]

Ալեքսանդրոպոլի բնակիչ Մկրտիչ Բաբայանը Քյուրուկ-Դարայի ճակատամարտին մասնակցած վիրավորների օգտին նվիրել է 100 ռուբլի, Անտոն Տեր-Սարգսյանը՝ այդ մարտին մասնակցած Կոստանդին Նիկոլաևիչի անվան գնդին նվիրել է յուրաքանչյուրին մեկական շարեք օղի և կես ֆունտ միս։ Շուշեցի Համբարձում Հախումովը ճակատամարտին մասնակիցների համար մուշտակներ կտրելու նպատակով նվիրել է 1000 ռուբլի արծաթե դրամ։[3]

Քյուրուկ-Դարայում տարած հաղթանակից հետո Բեհբութովի զորքերը վերադառնում են Ալեքսանդրոպոլ և նախապատրաստվում են 1855 թ. սպասվող պատերազմական գործողություններին։

Հաղթանակով վերադարձած զորքերին հայ բնակիչները դիմավորում են խանդավառությամբ։

Հայ բնակչությունը ամբողջ ձմեռվա ընթացքում ռուսական զորքերին ցույց է տալիս հնարավոր նյութական օգնություն։ Երևանի նահանգի Սուրմալուի տեղամասի Ալի Կամարլու գյուղի բնակիչ Ալեքսանդր Մելիք-Վարդանովիչը երևանյան ջոկատի զորքերին նվիրել է 50 չետվեր ցորեն։[4] Երևանի նահանգի, Ալեքսանդրոպոլի գավառի, Շորագյալի տեղամասի բնակիչները զորքին նվիրել են 168 խոշոր եղջերավոր անասուն, 311 ոչխար, Նոր-Բայազետի բնակիչները՝ 1000 ռ. արծաթ, Շորագյալի բնակիչները՝ 1000 բատման ցորեն, վերին Ագուլիսեցի Մկրտիչ Տեր-Միրզոյանը նվիրել է 40 խալվար ցորեն։[5] Միաժամանակ՝ 1854 թ. մայիսի 9-ի իր հրամանում Բեհբութովը հայտնում է, որ Օրդուբադի գավառի բնակիչ Ավետիս Տեր-Գրիգորյանը նվիրել է 2000 ռ. արծաթ՝ Արփաչայի վրա կամուրջ կառուցելու համար,[6] Ղա-

[1] Հայկական ՍՍՌ Գետ. կենտր. Արխիվ, ֆ. 57, գ. 135, թ. 33։
[2] Кавказ, 1856 г., № 12.
[3] Там же, 1854 г., № 67.
[4] Там же, 1854 г., № 88.
[5] Там же, 1854 г., № 31.
[6] Там же, № 34.
[7] Там же, № 40.

մարլուի բնակիչ Մելիք Վարդանյանը նվիրել է 200 քառորդ ցորեն, Սղնախի բնակիչ Բաղդասար Մանուչարյանը՝ 500 ռուբլի։[1]

1854 թ. դեկտեմբերի 29-ին Էջմիածնի վանքի աստիճանավոր Ստեփան Սամվելյանը վանքի գանձապահին և կառավարչությանը հայտնում է Բեհբութովի հրամանը՝ Ռյաժսկի գնդի գնդապետ Գանեցկոյի գնդին կերակրելու մասին, որի համար նա հրամայում է բաց թողնել 50 թունգի օղի, 10 խոզ, 3 եզ, 15 փութ բրինձ, 50 փութ ալյուր և 150 թունգի գինի։ Միևնույն գնդի հրամանատար Գանեցկոյը հայտնում է, որ վանքը դեկտեմբերի 25-ին եկեղեցու մեծ հանդեսի օրը զորքին նվիրել է 50 թունդի օղի, 100 թունդի գինի, 10 փութ բրինձ, 30 փութ ալյուր, 10 վարազ, մեկ ցուլ։[2]

Այդ միևնույն տոնախմբության օրը Էջմիածնի շրջակայքի զորքերին բնակիչները տվել են՝ 50 թունգի օղի, 150 թունգի գինի, 15 փութ ցորեն, 150 փութ ալյուր, 10 խոզ, 3 եզ։[3]

* * *

1855 թ. գարնանը, ձմեռվա դադարից հետո, վերսկսվում են ռազմական գործողությունները։ Ռուսական զորքերը ձգտում էին գրավել Կարսը, առաջ խաղալ։

Թուրքերը մեծ ուժեր էին կենտրոնացրել Կարսում և անգլիական կոմիսար Վիլյամսի պահանջով, որոշել էին ամեն կերպ պաշտպանել Կարսը։ Այսպիսով, Կովկասյան ֆրոնտի ռազմական գործողությունները կենտրոնանում էին Կարսի շուրջը։

Ռուսական կորպուսի հրամանատար գեներալ Մուրավյովը որոշում է կտրել Կարսը էրզրումից և օղակման միջոցով գրավել այն։

Այդ նպատակով էլ, Մուրավյովը ձեռնարկում է մի էքսպեդիցիա՝ դեպի Սողանլու, որի ընթացքում իրենց ակտիվ գործողություններով, որպես լավագույն հետախույզներ աչքի են ընկել հայ կամավորները։

Մուրավյովի 1855 թվականի հունիսի հաղորդագրության մեջ ասված է.

«Հունիսի 7-ին Լորիս Մելիքովի կամավորների մեկ հարյուրակ ուղարկվել է հետախուզության՝ Բեգլի Ախմեդ գյուղի մոտ։ Հարյուրակը գերի է վերցրել արաբիստանյան հրետանային գնդի կվարտիր-մեյստերին, որն ուղարկված է եղել Կարսից՝ գյուղերից գարի և ցորեն հավաքելու համար»։[4]

Մի այլ զեկուցագրում ասված է.

«Կարսի շրջապատումը շարունակվում է։ Մենք հարձակվում ենք թշնամու առանձին խմբերի վրա, ոչնչացնում նրանց։ Այսպես, օրինակ՝ հոկտեմբերի 13-ին երկու հարյուր թուրքերի դեմ, որոնք դուրս էին եկել Կարսից, ուղարկվել է Կոնոնո-մուսուլմանական № 1 գունդը՝ պրոպարուշիկ Ռուստամբեկ Լազար-բեկովի գլխավորությամբ, որը ջարդելով նրանց, գերի է վերցրել վեց հոգուն»։[5]

Այն ժամանակ, երբ Մուրավյովն զբաղված էր Կարսի էքսպեդիցիայով,

[1] Кавказ, 1854 г., № 43.
[2] Հայկական ՍՍՌ Պետ. Կենտր. Արխիվ, Փ. 57, գ. 157, թ. 66։
[3] Նույն տեղում, թ. 69։
[4] Современник, август, 1855 г., стр. 11.
[5] Там же, декабрь, стр. 12.

թուրքերը մի կողմնակի հարձակում են կատարում Ախալքալաքի վրա։ Այդ մարտում էլ իրենց ակտիվ գործողություններով աչքի են ընկնում հայերը։

Հունիսի 23-ին Ախալքալաքի մոտ ջախջախված թշնամուն հետապնդելու և նրան վերջնական հարված հասցնելու ընթացքում, իր լավագույն գործողություններով աչքի է ընկել Սամսոնյանի հեծյալ ջոկատը։[1]

Կարսի շրջապատումը վերջնականապես ավարտելու նպատակով Մուրավյովը շարժվում է առաջ, ամրանում քաղաքից 8 կիլոմետր հեռավորության վրա, նպատակ ունենալով կտրել Կարսի և Էրզրումի միջև եղած կապը։

Կարսի թուրքական կայազորի մեջ դասալքությունը դառնում է մասսայական երևույթ։ Քաղաքում գտնվող հայերն ամեն կերպ օգնում էին ռուսներին։ Ինչպես „Русский вестник" թերթը գրում է. «Կարսում համարյա մշտապես մենք ունենք մեր հետախույզները— հայերից»։[2]

Թուրքական հրամանատարությունը և Վիլյամսը հաշվի առնելով հայերի գործողությունները, խիստ ռեպրեսիաների են դիմում նրանց նկատմամբ։ Վիլյամսի կարգադրությամբ գնդակահարվում են մի քանի տասնյակ «կասկածելի» հայեր։

Բժիշկ Սանդվիգի հիշողությունների մեջ հիշատակվում է երկու հայերի՝ կախաղան բարձրացնելու և երկուսի տանջամահ՝ արվելու մասին։

Օգոստոս ամսին ռուսական բանակին հաջողվում է լրիվ կտրել Կարսի կայազորի կապը արտաքին աշխարհի հետ։

Վիլյամսը ցանկանում է գաղտնի հարձակումների միջոցով նյութական միջոցներ հայթայթել։

Այսպիսի փորձ նա կատարում է օգոստոսի 14-ին՝ դեպի Զախմախյան բարձրությունները, սակայն ռուսները նախօրոք իմանալով նրա մտադրությունը, կտրում են նրա ճանապարհը։[3]

Նման փորձ նա կատարում է Պենյակի ուղղությամբ, նպատակ ունենալով փոխադրել այնտեղ կուտակված պաշարները, որոնց պաշտպանության համար թուրքերն ունեին 1500 կամավորական հեծելազոր և 1000 բաշիբոզուկներ՝ Ալի փաշայի գլխավորությամբ։

Տեղական հայ բնակչությունը այս մասին հայտնում է ռուսական գլխավոր հրամանատարությանը։ Օգոստոսի 30-ին այնտեղ ուղարկվում է Կավալևսկին, որի առաջապահ ջոկատը Լորիս Մելիքովի կամավորներն էին։

Պենյակի վրա առաջին գրոհը սկսել են Թումանովի կամավորները, որոնք՝ չնայելով թուրքական ուժեղ կրակին, առաջ են նետվում, գրավում գյուղը, գերում Ալի փաշային և 45 մարդ, թողնելով 300 սպանված։ Թուրքական մնացած հեծյալները դիմում են փախուստի։

Պենյակի մարտում աչքի ընկնող իրենց ծառայությունների համար պարգևատրվել են՝ Դիմիտրի Օնիկյանը «սուրբ Ստանիսլավի 2-րդ աստիճանի մեդալով», միլիցիայի պոդպորուչիկ Սահակ Ավանեսովը, վեքիլներ Դիմիտրի Մելիքովը, Մամեդ աղա Մինասովը՝ արծաթե մեդալով, «Որ քաջ է» մակագրությամբ։

---

[1] Современник, июль, 1855 г., том 4, стр. 12.

[2] Русский вестник, 1861, № 34.

[3] Այդ հանդիպման ժամանակ թուրքերը կորցնում են 125 սպանված, 221 գերի և 800 ձի։

Ռազմական շքանշանի պատվո նշանով պարգևատրվել են Զախար Եղիազարովը, Գևորգ Մուրադովը, Կարապետ Էդիլխանովը, ճակատում գտնվող թարգմանիչներ Մանուկ և Մարտիրոս Բեհբութովները պարգևատրվել են արծաթե մեդալով, «Որ քաջ է» մակագրությամբ։

Սերգեյ Վարշամովը (միլիցիայի պարուչիկ) պարգևատրվել է «Ռազմական շքանշանի պատվո նշան»-ով, 2-րդ հարյուրապետի օգնական Սահակ Ավանեսովը, Սարգիս Բաղդասարյանը՝ արծաթե մեդալով, «Որ քաջ է» մակագրությամբ, Ստեփան Հարությունյանը՝ «Ռազմական շքանշանի պատվո նշան»։[1]

Ալի փաշան, երբ ներկայացվում է Մուրավյովին, ասում է՝

«Սարդար, ինձ գերի վերցնելը հավասար է Կարսը գրավելուն»։[2]

Կարսի գրությունը կրիտիկական է դառնում, շուտով տարածվում է խուլերան։

Վիլյամսը գլուխը կորցնում է։

Ռուսական բանակը տեղական հայերի օգնությամբ սկսում է շարժվել դեպի Կաղզվան, որի գրավումով ռուսները Աղրի դաղով կարող էին ազատ կապ պաշտպանել երևանյան ջոկատի հետ։

Կաղզվանի գրավման գործը հանձնարարվում է Լորիս Մելիքովին։

Քաղաքի դիվանը դեռևս ռուսների դեպի Սողանլու կատարած էքսպեդիցիայի ժամանակ փախել էր։

1855 թվականի սեպտեմբերին Օմար փաշան մոտ 50 հազարանոց բանակով դուրս է գալիս Սուխում, դրանով իսկ վտանգ ստեղծում ռուսական զորքերի թիկունքում։

Մի կողմից Օմար փաշայի Սուխումում հայտնվելը և մյուս կողմից Սևաստոպոլի անկումը ոգևորում է Կարսում օղակված թուրքական զորքերին, որոնք կարծում են, որ այդ բոլորից հետո Մուրավյովը ստիպված կլինի դադարեցնել օղակումը։ Մուրավյովը, սակայն, ոչ միայն չի հրաժարվում օղակումից, այլև ավելի խորացնում է այն։

Մուրավյովը Կովկաս գալու առաջին ամիսներին նախատեսել էր թուրքերից սպասվող վտանգը թիկունքից, որի համար մի շարք միջոցառումներ էր ձեռնարկել։

Համաձայն 1855 թ. ապրիլի 5-ի № 487 հրամանի, Թիֆլիսում կազմվել էր քաղաքային աշխարհազոր՝ քաղաքը վերահաս վտանգից պաշտպանելու համար։

Աշխարհազորի ընդհանուր ղեկավար էր նշանակվել Բագրատիոն Մուխրանսկին։

Աշխարհազորական դրուժինաները կազմակերպելու համար ստեղծվել էր հատուկ հանձնաժողով, գնդապետ Սիվերկովի գլխավորությամբ։ Հանձնաժողովի կազմի մեջ մտնում էին Պյոտր Սոկոլովսկին, Սոլոմոն Կարգանովը (ազնվականության կողմից), Սոլոմոն Միրիմանովը և Պետրոս Համբարձումյանը։

Հիշյալ հանձնաժողովը կազմակերպել էր աշխարհազորային 6 դրուժինա։

[1] Кавказ. 1855, № 73.
[2] См. Богданович. том IV, стр. 306.

№ 1 դրուժինայի հրամանատար է նշանակվում Սոլոմոն Սարաջևը, հարյուրապետներ են նշանակվում Շահբուդաղ Շահբուդաղովը, Մելիքսեթ Իշխանովը, Իվան Սվեչիկովը, Ստեփան Ղազարովը, Իվան Մուրանովը։ Ամբողջ դրուժինան բաղկացած էր 1017 հոգուց։

№ 2 դրուժինայի հրամանատար է նշանակվում Աբիսոլոմովը, հարյուրապետներ՝ Սոլոմոն Շոլկովեզովը, Իվան Ստասլովը, Բագրատ Սալդատովը, Իվան Պոքինովը, Գևորգ Վարդանովը, ընդամենը՝ 1070 մարդ։

№ 3 դրուժինայի հրամանատար է նշանակվում Ավետիք Ավետիքովը, հարյուրապետներ՝ Գադո Ավետիսովը, Եգոր Դավիդովը, Գուրգեն Տեր-Միքայելովը, Սոլոմոն Օսիպովը (ընդամենը՝ 1912 մարդ)։

№ 4 դրուժինայի հրամանատար է նշանակվում Սոլոմոն Միրիմանովը, հարյուրապետներ՝ Իլարիոն Պրոկոպովը, Իսահակ Պուգինովը, Միրո Միրիմանովը, Պավել Իզմիրովը, Գարսևան Բերիշովը։ (Ընդամենը 1938 մարդ)։

№ 5 դրուժինայի հրամանատար է նշանակվում Զաքար Ամիրասովը, հարյուրապետներ՝ Շաքար Միրիմանովը, Իվան Միրիմանովը, Գրիգոր Շիրեր, Ավետիք Թարխանովը, Շուլցը (ընդամենը 1052 մարդ)։

№ 6 դրուժինայի հրամանատար է նշանակվում Պյոտր Աբրամովը, հարյուրապետներ՝ Նարովկան, Խեչումովը, Մկրտիչ Կասումովը, Սոլա Ռևազովը, Ղազար Վարդանովը, Եգոր Շուբաշևը (ընդամենը 1921 մարդ)։[1]

Չնայած Մուրավյովի այս ձեռնարկումներին, ինչպես նաև տեղական բնակչության պատրաստակամությանը դուրս գալու թշնամու դեմ, թուրքական բանակի առաջխաղացումը թիկունքի համար մնում էր սպառնալից վտանգ։

Մուրավյովի կարծիքով Սևաստոպոլի անկումը կբարդացներ Կովկասյան ռազմաճակատի գործերը և այդ նպատակով նա սեպտեմբերի 14-ին իր մոտ է կանչում Բակլանովին և հայտնում է Կարսի վրա գրոհելու իր մտադրությունը։

Բակլանովը, ծանոթ լինելով կովկասյան պայմաններին, անժամանակ է համարում սկսել գրոհը և անհրաժեշտ է գտնում մանրամասն ուսումնասիրել իրերի դրությունը, ապա նոր սկսել։ Այդ իսկ նկատառումով, ինքը՝ Բակլանովը սկսում է ամրոցի ուսումնասիրությունը, որից հետո գալիս է այն եզրակացության, որ այդ գրոհն իմաստ չունի, քանի որ թվական գերակշռությունը թուրքերի կողմն է, Կարսը խիստ կերպով ամրացված է և որ կարևորն է, թուրքերը գիտեն նախապատրաստվող գրոհի մասին։

Չնայած Բակլանովի բոլոր պատճառաբանություններին, Մուրավյովը՝ իրեն հատուկ փառասիրությամբ, սեպտեմբերի 15-ին հրավիրում է ռազմական խորհուրդ (առանց Բակլանովի), հայտնում է, որ պաշարված քաղաքը բավականին մանրազնին ուսումնասիրվել է (իրականում իհարկե այդպես չէր), որ իրենք ի վիճակի են սկսել գրոհը։

Ռազմական խորհուրդը որոշում է 17-ին սկսել գրոհը։

Մուրավյովն իհարկե իրավացիորեն գտնում էր, որ Օմար փաշայի բանակը մի շաբաթվա ընթացքում Կարս հասնել չէր կարող։ Միաժամանակ

[1] Актъ, том XI, стр. 315.
[2] ЦГВИА, ф. ВУА, д. 75074, л.л. 9–10.

ճիշտ էր նկատում, որ Էրզրումում գտնվող Վելի փաշան օրեց-օր սպառնալից էր դառնում իր զորքերի թիկունքում։

Սեպտեմբերի 17-ին Կարսի վրա կատարված գրոհին, ռուսների հետ միասին, մասնակցել են նաև տեղական ժողովուրդներից կազմված ջոկատները՝ հեծյալ մուսուլմանական № 1-ին գունդը, քրդական № 2-րդ գունդը, վրաստական դրուժինան, լեռնային միլիցիան և հայ կամավորները։ Գրոհին մասնակցած հայերից իրենց գործունեությամբ աչքի են ընկել՝ կապիտան Տեր-Ստեփանյանը, փոխ-տեղակալ Ագապյանը, տեղակալ Դոլուխանովը և ուրիշները։[1]

Ռուսներին քիչ օգնություն չեն ցույց տվել նաև Կարսում բնակվող հայերը, որոնք իրենց կյանքը վտանգի ենթարկելով, անհրաժեշտ տեղեկություններ են հասցրել ռուսական բանակին։

Սեպտեմբերի 17-ի գրոհը վերջանում է ռուսական կորպուսի համար անհաջողությամբ, բայց չի ընկճում բանակի ոգին, գլխավոր հրամանատար Մուրավյովին, որը համառ կերպով շարունակում է պաշարողական աշխատանքը, նպատակ ունենալով հարմար առիթին գրոհով, կամ կայազորը սովամահ անելով վերցնել Կարսը։

Գրոհի հաջորդ օրը Մուրավյովն իր մոտ է կանչում Լ. Մելիքովին և հարցնում՝ «Երկու ամսվա վառելանյութի և ֆուրաժի հնարավորություն կա՞»։ սա ստանում է դրական պատասխան, որովհետև Լորիս Մելիքովը հույս ուներ դրանք հայթայթել տեղական հայ բնակիչների միջոցներով և նրանց անմիջական օգնությամբ։ Այդպիսի օգնություն հաճախ էր տրվում։ Օրինակ՝ «Կավկազ» թերթի 1855 թվականի № 87-ում տեղավորված մի հաղորդագրություն ասում է, որ գործող բանակի աշխատանքին և քաջություններին ականատես Ալեքսանդրոպոլ քաղաքի բնակիչները առիթ են ունեցել ցույց տալու իրենց եղբայրական կապը զորքի հետ։ Երբ նրանց լուր է հասնում սեպտեմբերի 17-ի արյունալի մարտի մասին, անմիջապես պատրաստում են լավագույն տները՝ վիրավորների համար։ Նրանք կատարում են իրենցից կախված ամեն հնչ պատերազմում տուժվածներին տեղավորելու համար և, ինչպես ասում է թղթակիցը, բոլոր վիրավորները անմիջապես հասնելով Ալեքսանդրոպոլ՝ տեղավորվում են հարմար տներում։ Բնակիչների հոգատարությունը չի սահմանափակվել միայն շենքերի պատրաստումով։ Նրանք ամեն կերպ աշխատել են օգնել զորքին՝ հնարավոր բոլոր միջոցներով։[2]

Այդպիսի օգնության մասին են խոսում նաև «Կավկազ» թերթի 1855 թվականի բազմաթիվ այլ համարներ։

Շուշու հայկական ընկերությունը վիրավորների օգտին նվիրել է 1647 ռ. 50 կ. արծաթ։[3] Մարիա Սոլոմոնի Բեհբութովը նվիրել է 100 չերվոն։[4] Դվին գյուղացի Աբրահամը նվիրել է 144 թունգի դինի։[5] Վերին Ագուլիսի բնակիչ Մկրտիչ Տեր-Մկրտչյանը նվիրել է 40 խալվար ցորեն։[6] Պյատիգորսկի հայկական ընկերությունը Ղրիմում գործող զորքերի օգտին նվիրել է 999 ռուբ-

[1] Акты, том XI, стр. 175.
[2] Кавказ, 1855 г., № 87.
[3] Там же.
[4] Там же, № 81.
[5] Там же, № 13.
[6] Там же, 1854, № 4

լիս։[1] Ստավրոպոլի հայերը նվիրել են 4267 ռ.,[2] Դիլիջանի բնակիչ Հովհաննես Սահակյանը իր ջրաղացում զորքի համար աղացել է 1000 չետվեր ցորեն։[3] Զորքի համար սայլեր գնելու նպատակով Ալեքսանդրոպոլի հետևյալ բնակիչները նվիրել են իրենց ուժերի չափով փող՝ Սարոկանը՝ 50 ռուբլի, Խաչատուր Ալավերդյանը՝ 50, Ագաբաբ Խոջոյանը և Աղասի Սիմոնյանը՝ 50 ռ., Միքայել Տիգրանյանը՝ 25, Մկրտիչ Բաբայանը՝ 25, Մարտիրոս Կարապետյանը՝ 25, Նազարեթ Կոստանյանը՝ 15, Ռաֆայել Օգնեսյանը՝ 10, Հակոբ Բաբայանը՝ 10, Սարգիս Սարգիսովը՝ 10, Մկրտիչ Ջալալյանը՝ 10, Մուղդուսի Աղայանը՝ 10, Ավագ Խաչատրյանը՝ 10, Հակոբ Պալցովը՝ 10 Դավիթ Բաղդասարյանը՝ 10, Աբել Գաբրիելյանը՝ 10։ Թուրքահայերից Ղուկաս Սաղաթելյանը՝ 10, Պետրոս Ցիտաշցյանը՝ 10, Մկրտիչ Տեր-Հարությունյանը՝ 10, Նիկողայոս Արսենովը՝ 10, Մանուկ Ապուշևը՝ 10, Գրիգոր Տայանցը՝ 10, Մուղդուսի Համբարձումյանը՝ 10 և այլն։[4]

Սեպտեմբերի 17-ի գրոհի ընթացքում իրենց ցուցաբերած արիության համար պարգևատրվել են՝ Բալալ Սատուրյանը „Знак почета войного ордена"-ով, Օսեփ Ջաքարյանը, Սիմոն Փահլեվանյանը պարգևատրվել են ոսկե մեդալով և այլն։[5]

Օմար փաշան իր մոտավորապես 50 հազարանոց բանակով իջել էր Բաթում, նպատակ ունենալով Մինգրելիայով շարժվել դեպի Թիֆլիս և Մուրավյովին ստիպել թողնելու Կարսի պաշարումը։ Նա մեծ հույսեր ուներ Վրաստանում, հենվելով Ախալցխայի իշխան Շավարշիձեի վրա, որը դավաճանել էր ռուսներին և կապ հաստատել Շամիլի հետ։

Օմար փաշան առաջին անգամ հանդիպում է իշխան Մուխրանսկու զորքերին և ստանում նրանից լուրջ հարված։

Չնայած Օմար փաշային հաջողվում է տեր դառնալ Մինգրելիային, բայց տեղական բնակչությունն ատելությամբ է դիմավորում նրան։

Ընդհանրապես նրա հույսերը հոդս են ցնդում, Վրաստանում առաջ շարժվելու ոչ մի հնարավորություն չի ունենում և հրաժարվելով իր պլաններից, ստիպված է լինում նահանջել, չկարողանալով իրագործել թուրքական գլխավոր հրամանատարության և դաշնակիցների հույսը՝ իր գործողություններով ստիպել Մուրավյովին թողնելու Կարսի պաշարումը։

Միևնույն բախտին է արժանանում նաև Էրզրումից՝ Վելի փաշայի փորձը՝ օգնության հասնել Կարսի թուրքական կայազորին։

Կարսի կայազորի վիճակը կրիտիկական էր, նա ոչ միայն քաղցի էր մատնված, այլև գտնվում էր տագնապի մեջ, մի հանգամանք, որն ավելի արագացրեց Կարսի անկումը։

Քաղաքը տագնապի մեջ պահելու գործում մեծ աշխատանք են կատարում Լ. Մելիքովի հայ կամավորները, հատկապես յունկեր՝ Դանիել Հարությունյանը, որը ջոկատում հայտնի է եղել Դանիլկի անունով։ Նա եղել է ճկուն, խիզախ։ Մի անգամ նա իր հետ վերցնում է 3—4 մարտական ռակետներ և մի քանի հեծելակների ուղեկցությամբ գնում է գիշերային հետախու-

[1] Кавказ, 1855, № 44.
[2] Там же, № 27.
[3] Там же, № 28.
[4] Там же, № 67.
[5] Там же, № 89.

զությանն։ Մթության մեջ կարողանում է մոտենալ թշնամուն, մտնել նրա խրամատները, բաց թողնել մարտական ռակետները և արագ կերպով մի կողմ քաշվել։ Այդ ժամանակ ամրոցում սկսվում է հրետանային կրակ։ Փողերի ու թմբուկների կանչով զորքերը մարտական կարգով հավաքվում են իրենց հավաքակետերում։

Այսպիսի տագնապները հանգիստ չեն տալիս առանց այդ էլ քաղցած կայազորին։

Նույնն է վկայում Մուրավյովը.

«Թշնամու համար այնքան զգալի չէին փոքր հարվածները, որքան գիշերային տագնապները, որոնց համար մեծ մասամբ ուղարկվել է Լորիս Մելիքովի կամավորներից՝ ճկուն, հայ միլիցիայի յունկեր Դանիել Հարությունյանը»։[1]

Հոկտեմբերի 20—21-ի գիշերը Լորիս-Մելիքովի ջոկատից 25 հոգի մոտենալով Կանալ Թաիային, հրթիռ են բաց թողել թուրքական բանակի վրա, հրացանային կրակ են բաց արել բակում կանգնած պահակի վրա, որ առաջացրել է ընդհանուր տագնապ թշնամու զորքերի մեջ։ Դրանից հետո կամավորները նահանջել են առանց կորստի։

Կարսում ստեղծված անմխիթար վիճակից դուրս գալու համար Վիլյամսը զորքից գաղտնի նախապատրաստում է մի ջոկատ, Զախմախյան լեռներով դեպի Օլթի գնալու համար։

Տեղական հայերից իմանալով Վիլյամսի այդ մտադրության մասին, Մուրավյովը հրամայում է ամրացնել Զախմախները։

Նա մի կողմից ավելի է սեղմում պաշարման օղակը, մյուս կողմից փոքրիկ ջոկատներով որոնում է թուրքական այն փոքրիկ խմբերը, որոնք ցանկանում էին դուրս գալ շրջապատումից։

Այդպիսի որոնումներ և հեռավոր հետախուզություններ կատարում էին մեծ մասամբ հայ կամավորները, որոնք ավելի լավ էին ծանոթ տեղանքին։

1855 թ. հոկտեմբերի 27-ին 65 հոգուց բաղկացած հայ կամավորների մի ջոկատ մեկնում է Զիֆլիղայից դեպի Քյորփի-Քեյ, որտեղ ամրացել էր թշնամին։

• Ջոկատը հոկտեմբերի 29—30-ին Արաքսի աջ կողմում իմանալով, որ Քյորփի-Քեյի մոտ գտնվող Ամիրակում գյուղում տեղավորված են 350 թուրք բաշիբոզուկներ, գրոհում է, հանկարծակի բերում նրանց, վերցնում 5 գերի, այդ թվում և հարյուրապետին։[2]

1855 թ. հոկտեմբերի 13-ին Կարսից դուրս է գալիս մոտ 200 հոգուց բաղկացած մի ջոկատ, ցանկանալով շրջակայքից կենսամթերք հայթայթել։ Ջոկատը նկատվում է Ղարաբաղի հեծյալ մուսուլմանական գնդի փոխ տեղակալ Լալաբեկովի կողմից, որն իր 20 հոգուց բաղկացած ջոկատով գրոհում է նրա վրա, ետ շպրտում, սպանելով մի քանի տասնյակ հոգի, վերցնելով գերիներ։[4]

Օղակումը և որոնումները թուրքերին հասցրել էին կրիտիկական դրության. նրանք կոցրել էին օգնության ամեն մի հույս։

---

[1] Муравьев Н. Н., Война за Кавказом в 1855 г., том II, ч. III, стр. 134.
[2] Там же.
[3] Там же, стр. 156.
[4] Там же, стр. 157.

Այսպիսի պայմաններում Կարսում հրավիրվում է ռազմական խորհրդի նիստ, որին մասնակցում է նաև Վիլյամսը։ Խորհուրդը՝ ելնելով ստեղծված պայմաններից, որոշում է բանակցություններ սկսել անձնատուր լինելու համար։ Նոյեմբերի 12 (24)-ին թուրքական պատգամավորությունը Վիլյամսի հատուկ նամակով բանակցություններ սկսելու նպատակով ներկայանում է Մուրավյովին։ Վերջինս համաձայնվում է հաջորդ օրը ևեթ սկսել բանակցությունները։[1]

Նոյեմբերի 13-ին Վիլյամսը գալիս է ռուսական ճամբար, ըստ պայմանի տեսակցություն ունենում Մուրավյովի հետ, հայտնում է որ ինքը գլխավոր հրամանատարի հանձնարարությամբ եկել է բանակցություններն սկսելու։

Քաղաքի հանձնման ակտը կատարվում է նոյեմբերի 16-ին։ Նույն օրը ռուսական զորքերը մտնում են Կարս։ Նոյեմբերի 16-ի երեկոյան Մուրավյովը հատուկ հրաման է տալիս զորքերին՝ փայլուն հաղթանակի կապակցությամբ։

«Այսօր որպես ռազմագերի հանձնվեց Փոքր Ասիայի սովից ու քաղցից հյուծված սույն ամրոցի կայազորը։ Մեզ մոտ գերության մեջ է ինքը գլխավոր հրամանատար Մուշիր Վասիֆ փաշան. բացի նրանից 8 փաշաներ, շատ շտաբային և օբեր սպաներ և նրանց հետ միասին անգլիական գեներալ Վիլյամսն իր ամբողջ շտաբով։ Վերցված է 130 թնդանոթ և ամբողջ զենքը»։[2]

Կարսի անկումով փաստորեն ոչնչանում էր Կարսում գտնվող Անատոլական թուրքական բանակը, որից 800-ը գերի են հանձնվում, իսկ մնացած մասը ոչնչանում է մարտերում, քաղցից և խոլերայից։

Ստրատեգիական տեսակետից Կարսի գրավումը ռուսական հաղթական զորքերի առաջ բաց է անում ճանապարհը դեպի Էրզրում։

Կարսի անկման լուրը արագ կերպով տարածվում է ամենուրեք, թողնելով մեծ տպավորություն։ Քաղաքի անկումը միաժամանակ արագացնում է պատերազմի վախճանը և, որ կարևորն է, մեծ ազդեցություն է ունենում փարիզյան հաշտության ընդհանուր ընթացքի վրա։ Կարսի անկման նշանակության մասին 1856 թ. ապրիլի 5-ին Մարքսը գրում էր.

«Կարսի անկումը համարվում է շրջադարձային կետ Ռուսաստանի դեմ մղված կարծեցյալ պատերազմի պատմության մեջ։ Առանց Կարսի անկման չէին կարող լինել հինգ կետերը, չէր կարող լինել ոչ կոնֆերանսը, ոչ Փարիզի պայմանագիրը, մի խոսքով չէր կարող լինել կարծեցյալ հաշտությունը»։[3]

1853—1856 թ. թ. Ղրիմի պատերազմն ամբողջությամբ վերցրած երկու կողմերի համար էլ անարդարացի պատերազմ էր։

Ցառական Ռուսաստանը՝ մտնելով այդ պատերազմի մեջ, ցանկանում էր ամրանալ Մերձավոր Արևելքում, էլ ավելի ուժեղացնել իր էքսպանսիան և դրանով իսկ ճնշել երկրի ներսում ճորտատիրության դեմ բռնկված գյուղացիական հուզումները։

Այդ պատերազմում Անգլիան, Ֆրանսիան և Թուրքիան շարունակում էին առաջ տանել Ռուսաստանի մեկուսացման իրենց տրադիցիոն քաղաքականությունը, որի հիմնական նպատակն էր Ռուսաստանին զրկել Սև ծովով դեպի

[1] Богданович, том IV, стр. 390.
[2] Богданович, том IV, стр. 402—403.
[3] К. Маркс и Ф. Энгельс, Соч., том X, стр. 551.

համաշխարհային առևտրական ուղիները դուրս գալու հնարավորությունից։

Այդ պետություններն ամեն կերպ ձգտում էին փակ պահել Բոսֆորի և Դարդանելի նեղուցները, որոնք Ռուսաստանի համար ունեին ռազմա-ստրատեգիական և տնտեսական խոշոր նշանակություն։ Արևելյան հարցի այդ բարդ հանգույցը անցյալ դարի երկրորդ կեսից ավելի էր խճճվում և ռազմական բախումների պատճառ դառնում։ Այդ հակասությունների արտահայտություններից մեկը հանդիսացավ 1853—1856 թ. թ. Ղրիմի պատերազմը։

19-րդ դարի առաջին կեսում արդեն ավարտվել էր Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին, որով հայ ժողովրդի մի զգալի հատվածի տնտեսական և կուլտուրական կյանքը դրվել էր զարգացման ավելի պրոգրեսիվ ուղիների վրա։ Եթե պատմական այս խոշոր իրադարձությունը Արևելյան Հայաստանի հայերի համար շրջադարձային կետ էր հանդիսացել, ապա Արևմտյան Հայաստանի հայերը շարունակում էին մնալ իրավազուրկ վիճակում և հեծել սուլթանական Թուրքիայի դաժան ու արյունոտ լծի տակ։ Այդ է պատճառը, որ արևմտահայերը ևս իրենց հայացքը ուղղել էին դեպի ռուս մեծ ժողովուրդը և ցանկանում էին իրենց ազատագրության բախտը կապել նրա ռազմական օգնության հետ։ Այդ փայլուն կերպով դրսևորվեց Ղրիմի պատերազմի ժամանակ, առանձնապես Կովկասյան ռազմաճակատում։

Այդ ռազմաճակատում ռուսական զորքերի տարած հաղթանակներին մեծապես նպաստել են հայերն ու վրացիները։ Եվ այդ պետք է բացատրել ոչ թե այն բանով, որ նրանք համակրել են ցարիզմի կողմից մղվող անարդարացի պատերազմին, այլ այն բանով, որ նրանք այդ պատերազմում Ռուսաստանի հաղթանակի մեջ տեսել են թուրքական ծանր լծից ազատագրվելու հնարավորությունը։

Ղրիմի պատերազմը ավելի սրեց դասակարգային պայքարը Ռուսաստանում և նպաստեց գյուղացիական շարժումներին ու ռևոլուցիոն դեմոկրատների գործունեության աշխուժացմանը։ Այդ պատերազմը միաժամանակ փոխեց հասարակական հոսանքների պայքարի ձևերը ոչ միայն Ռուսաստանում, այլև Անդրկովկասում։

Ղրիմի պատերազմը թեև չլուծեց արևմտահայերի և արևելահայերի տերիտորիալ միասնականության հարցը, այնուամենայնիվ իր հետևանքներով նպաստեց հայ ժողովրդի ազգային կազմավորման պրոցեսի ուժեղացմանը, որն ամենից առաջ արտահայտվեց Հայաստանի երկու մասերի տնտեսական, քաղաքական ու կուլտուրական մերձեցմամբ և ազգային ազատագրական շարժումների ուժեղացմամբ։

Ղրիմի պատերազմում Ռուսաստանի կրած պարտությունը օրակարգի հարց դարձրեց ճորտատիրական իրավունքի վերացումը։ Ցարական կառավարությունը հարկադրված եղավ վերևից ռեֆորմ անցկացնել ոչ միայն Ռուսաստանում, այլև որոշ ուշացումով նաև Անդրկովկասում։

Պարոկաստանի և Թուրքիայի համեմատությամբ, առավելություն տալով Ռուսաստանին, չպետք է անտեսել լենինյան այն դրույթը, որ «Ցարական Ռուսաստանը եղել է ժողովուրդների բանտ», որ ցարիզմը փոքր ժողովուրդների, այդ թվում և հայ ժողովրդի նկատմամբ գաղութային քաղաքականություն էր վարում և միայն Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլուցիան էր, որ բոլշևիկյան պարտիայի, Լենինի և Ստալինի գլխավորությամբ լիակատար ազատություն բերեց այդ ժողովուրդներին։

А. Погосян

Кавказский фронт крымской войны и армяне

Резюме

Во время Крымской кампании на Кавказском фронте крупным победам отважных русских войск в боях значительно помогало активное участие армян и грузин. Буржуазные историки отмечали только роль армянских генералов, игнорируя заслуги, оказанные со стороны народных масс.

Действующие на Кавказском фронте малочисленные, но боеспособные русские силы с помощью местных народов не только приостанавливают продвижение турок и нарушают их наступательные планы, но и за время военных действий 1853—1854 г. г. особенно в победоносных боях у Башкадыклара и Кюрукьдара, нанося тяжелые удары противнику принуждают его перейти от наступательной к оборонительной тактике. Эти победы имели решающее значение для дальнейших успехов на Кавказской фронте. Русские войска, отбив у противника наступательную инициативу, держали ее в своих руках до конца, чем Закавказье было защищено от систематических нападений турецких банд. Помощь армянского и грузинского народов русским войскам надо объяснить не симпатией их к несправедливой войне, ведущейся царизмом, но тем, что в победе России в этой войне они видели возможность освобождения от тяжелого турецкого ига.

Ведущиеся бои на Кавказском фронте за Карс, а затем его взятие имели решающее значение не только для военных действий Кавказского фронта, но и большое влияние на исход Крымской войны. Это обстоятельство также ускользнуло от внимания историков.

„Падение Карса,—пишет Маркс,—является поворотным пунктом в истории мнимой войны против России. Без падения Карса не было бы пяти пунктов, не было бы ни конференций, ни Парижского договора, одним словом, не было бы мнимого мира“.[1]

Крымская война более обострила классовую борьбу в России, способствовала крестьянским движениям и оживлению деятельности революционных демократов. Эта война в то же время изменила формы борьбы общественных течений не только в России, но и в Закавказьи.

Несмотря на то, что Крымская война не разрешила вопрос территориального единства западных и восточных армян, все-таки она своими последствиями способствовала усилению процесса национального формирования армянского народа, который, в первую очередь, выразился в политическом и культурном сближении, а также в уси-

[1] К. Маркс и Ф. Энгельс—Соч. том X, стр. 551.

лении народно-освободительных движений обеих частей Армении. Это обстоятельство также не было учтено некоторыми армянскими исследователями.

Армянский народ в лице великого русского народа всегда видел своего освободителя от тяжелого ига турецких варваров и империалистических хищников.